ՆԱԽԱԳԾԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համառոտագիր

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և բացահայտել Շիրակի մարզի գիտաարտադրական և հետազոտական սուբյեկտների մրցունակության բարձրացման պոտենցիալ հնարավորությունները և զարգացման հեռանկարները ինովացիոն տարածաշրջանային կլաստերի շրջանակներում: Այդ կապակցությամբ նախատեսվում է իրականացնել շուկայական հետազոտություն և վերլուծություն մարզի կրթական և գիտաարտադրական կազմակերպությունների, տնտեսական սուբյեկտների, համայնքային կառույցների և հասարարական կազմակերպությունների միջև, փոխշահավետ համագործակցության հնարավորությունները որոշելու և ընդլայնելու համար: Արդյունքում ունենալու ենք ինովացիոն տարածաշրջանային կլաստերի ձևավորման մշակված մեթոդաբանությունը, ինովացիոն մեխանիզմները և տարածաշրջանային կլաստերային կենտրոնի հայեցակարգային մոդելը տարածաշրջանային համայսարանի համակարգում: